



Կարգապահական գործ թիվ ԿԳ-25079

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՆԻՆԱ ՏԻԳՐԱՆԻ ԿՈՒՑԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետ նաև՝ Հանձնաժողով**), Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի գեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,
մասնակցությամբ՝ փաստաբան Նինա Կուցանյանի,

քննության առնելով փաստաբան Նինա Տիգրանի Կուցանյանի (արտոնագիր՝ թիվ 2137) (**այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Լևոն Մկրտչյանը (**այսուհետ՝ Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**), հայտնել է, որ իր կնոջ՝ Մարիամ Խնկոյանի հետ փաստաբան Նինա Կուցանյանը 11.10.2024 թվականին կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որի հիման վրա պետք է իրականացնել իր՝ ամբաստանյալ Լևոն Մկրտչյանի շահերի պաշտպանությունը թիվ ԵԴ/0745/01/22 քրեական գործի շրջանակներում:

Ըստ դիմողի՝ Փաստաբանը երբևէ իրեն չի այցելել քրեակատարողական հիմնարկում, որպեսզի տրամադրի խորհրդատվություն: Պայմանագիրը կնքելուց առաջ և հետո Փաստաբանը գործի վերաբերյալ իրեն տվել է միմյանց հակասող տեղեկատվություն: Հակասական տվյալներ է հայտնել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու օրվա վերաբերյալ:

Դիմողը հայտնել է, որ ունի առողջական խնդիրներ, որոնց մասին իմացել է նաև Փաստաբանը, սակայն ամեն դատական նիստի ավարտից հետո իր կյանքի համար վտանգավոր վարքագիծ դրսևորելու խորհուրդներ է տվել: Մասնաժողովայնա խախտման

Թիվ ԿԳ-25079-2-Ա
12.11.2025թ.



միջոց կալանավորումը փոխելուն նպաստելու համար խորհուրդ է տվել 10 օրով հացադուլ հայտարարել: ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ԲԿ տեղափոխման համար,

Փաստաբանը խորհուրդ է տվել օգտագործել հատուկ թեյ, որը կարող է արագացնել սրտի աշխատանքն ու Դիմողին հասցնել այնպիսի վիճակի, որի դեպքում անհրաժեշտ կլինի դիմել շտապ բժշկական օգնության:

Դիմողը նկարագրել է նաև այլ հանգամանքներ, որոնք դուրս են Փաստաբանի վարքագծի կանոնագրքի կարգավորման առարկայից:

Դիմումին կից ներկայացվել է 11.10.2024 թվականին կնքված պայմանագրի պատճենը:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է կարգապահական պատասխանատվության ենթարկել փաստաբան Նինա Կուցանյանին:

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Դիմողին առաջարկվել է ներկայացնել բացատրություն:

Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 31.07.2025 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն վերջինս որևէ ապացույց կամ դիրքորոշում չի ներկայացրել:

2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Նինա Կուցանյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Լևոն Մկրտչյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 15.07.2025 թվականի բացատրությամբ, նկարագրելով Լևոն Մկրտչյանին վերաբերող գործի մանրամասները՝ հայտնել է, որ քրեակատարողական հիմնարկում տեսակցել է Լևոն Մկրտչյանին 14.10.2024 թվականին լիազորագիր ստանալու համար, դրանից հետո տեսակցության կարիք չի եղել, քանի որ ամենօրյա ռեժիմով Լևոն Մկրտչյանը զանգահարել է իրեն ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկից: Փաստաբանը հայտնել է, որ յուրաքանչյուր միջնորդություն անելուց առաջ այն ուղարկել է Դիմողին «WhatsApp» հավելվածի միջոցով: Իր ջանքերով ստացվել է հաշտություն կնքել տուժողի հետ, ինչն էլ հիմք է հանդիսացել խափանման միջոցի հետագա փոփոխման համար:

Բացատրությանը կից Փաստաբանը ներկայացրել է քրեական գործի նյութեր, մասնավորապես՝ միջնորդություններ, որոշումներ և գրություններ:

Ամբողջացնելով բացատրությունը, Փաստաբանը հավելել է, որ դիմումի բովանդակությունն իր համար ամբողջությամբ անընդունելի է:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 31.07.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 04.08.2025թ. գրությամբ նշել է, որ անհրաժեշտ ապացույցներն արդեն



իսկ ներկայացրել է: Հավելել է, որ Լ.Մկրտչյանի հետ համարյա ամենօրյա հեռախոսակապի մեջ է եղել, քննարկել են տարբեր գործերի հանգամանքներ, մշակել պաշտպանական մարտավարություն: 2023թ. նույնիսկ անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերել Դիմողին՝ դատարանում ապահովելով պաշտպանություն:

3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 22.07.2025թ. թիվ 222-Ա/ԿԳ-25079 որոշմամբ Նինա Կուցանյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) **2.7.1 և 3.5.5 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

28.07.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Շուշան Հարությունյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.09.2025թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-ից 3-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 12.11.2025թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը 11.10.2024թ. պայմանագիր է կնքել Մարիամ Խնկոյանի հետ թիվ ԵԴ/0745/01/22 քրեական գործով Դիմողի պաշտպանությունն իրականացնելու համար: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված՝ 11.10.2024թ. փաստաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի 1.1-ին կետով:*

2. Փաստացի Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը քրեական գործի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ և կից ապացույցներով:*

3. Փաստաբանի կողմից ստանձնած գործի շրջանակներում Դիմողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է տուժողի հետ հաշտության հիմքով երեք դրվագով, Փաստաբանի կողմից բազմաթիվ միջնորդություններ են արվել ի շահ պաշտպանական, այդ թվում վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու, փորձաքննություն նշանակելու, խափանման փոփոխման



վերաբերյալ, հարցումներ են արվել նրա առողջական վիճակը պարզելու նպատակով: *Սույն փաստերը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ և կից ապացույցներով:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ **Նինա Կուցանյանը** փաստաբան է հանդիսանում 25.07.2016 թվականից, և 2020-2025թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Փաստաբանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.1-ին ենթակետի համաձայն՝ փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հոգեբանական արվեստի տիրապետում:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման

կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային քննադատական առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես



իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ
իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված, Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով
փաստաբանի համար սահմանվում են նաև մի շարք այլ պարտականություններ, որոնց
շարքում առանձնակի նշանակություն ունի բարձր մասնագիտական պատրաստվածությունը
և անհրաժեշտ գործնական փորձի առկայությունը, որի հետ էլ փոխկապակցված է
վստահորդի նպաստավոր շահերից ելնելու և բարեխղճորեն և ժամանակին վստահորդի
իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պարտականության պատշաճ
կատարումը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը,
որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների,
ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման
համար:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական
հանգամանքներին, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ստանձնելով
Դիմողի շահերի պաշտպանությունը փաստացի հետամուտ է եղել վերջինիս շահերի
պաշտպանությանը թիվ ԵԴ/0745/01/22 քրեական գործի շրջանակներում:

Փաստաբանի կողմից ստանձնած գործի շրջանակներում Դիմողի նկատմամբ քրեական
հետապնդումը դադարեցվել է տուժողի հետ հաշտության հիմքով երեք դրվագով,
Փաստաբանի կողմից բազմաթիվ միջնորդություններ են արվել ի շահ պաշտպանյալի, այդ
թվում վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական հետապնդումը
դադարեցնելու, փորձաքննություն նշանակելու, խափանման միջոցի փոփոխման
վերաբերյալ, ինչպես նաև հարցումներ են արվել նրա առողջական վիճակը պարզելու
նպատակով:

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանողը կատարել է իր
վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքի պաշտպանությանն ուղղված
ողջամիտ բոլոր գործողությունները: Հետևաբար հերքվում է նաև այն հանգամանքը, որ
Փաստաբանը չի դրսևորել բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության
իմացություն և գործնական փորձ, կամ չի տիրապետել փաստաբանական գործունեության
մարտավարության մեթոդներին և միջոցներին, ինչպես նաև հռետորական արվեստին կամ
իր մասնագիտական կարողությունների սահմաններում բարեխիղճ իրավական օգնություն
ցույց չի տվել վստահորդին:

**Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր
է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների
պալատի կանոնադրության պահանջները:**

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է
կարգապահական պարասխանարվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի
կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :**

**Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ
կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և
փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կարգավորված
կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի
համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:**



Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ նույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնադրի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ նույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարծում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնադրի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնադրի պահանջների խախտման կատարման մասին:



Տվյալ դեպքում, Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց՝ Փաստաբանի կողմից Դիմողի կյանքը և առողջությունը վտանգող խորհուրդներ տալու վերաբերյալ, որի հիման վրա ապացուցված կհամարվեր Փաստաբանին վերագրվող արարքի կատարումը:

Ինչ վերաբերում է Դիմողի այն պնդմանը, որ Փաստաբանը վաղեմության ժամկետն անցնելու վերաբերյալ հակասական տվյալներ է հայտնել, ապա Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում պարզաբանել է նշված հանգամանքը, ինչն Հանձնաժողովը գնահատմամբ՝ ընդունելի է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Դիմողի կողմից վերը նշված փաստերը չապացուցելը հանգեցնում է այնպիսի բացասական իրավական հետևանքների, որոնց ուժով տվյալ փաստը պետք է համարել չապացուցված և գոյություն չունեցող:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրությունները և դրանց կից ներկայացված ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում են փաստաբան Նինա Կուցանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց


1. Փաստաբան Նինա Տիգրանի Կուցանյանի (արտոնագիր՝ թիվ 2137) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25079 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

**ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝**

**Թիվ ԿԳ-25079-2-Ա
12 նոյեմբերի 2025թ.
ք.Երևան**



Տարևիկ Շալջյան